ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

177
(3208)

18 դեկտեմբերի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՀԵՌԱՆԱԼ ԵՆ ՀՈՐԴՈՐԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ Կառավարությանը մոտ կանգնած իր աղբյուրներից տեղեկացել է՝ Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանին հորդորել են ազատման դիմում ներկայացնել:

Մեր աղբյուրները փոխանցում են, որ դեկտեմբերի 16-ին ՔՊ-ի վարչության նիստի ժամանակ որոշում է կայացվել նրան այդ պաշտոնից հեռացնելու մասին. Առուշանյանը չի արդարացրել ՔՊ-ի հույսերը:

Գրեթե քաղաքական կարիերա չունեցող Դավիթ Առուշանյանը հեղափոխությունից հետո, բախտի բերմամբ, թե պատահմամբ, ընտրվեց Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ (2021թ.):

Հենց այս նույն սկզբունքով Առուշանյանը նախորդ տարի՝ 2024 թվականի դեկտեմբերին, պատգամավորական մանդատը վայր դրեց եւ դարձավ Շիրակի մարզպետ: Դավիթ Առուշանյանը փոխարինեց Մուշեղ Մուրադյանին, որը նույնիսկ չգիտեր, որ պաշտոնանկ է արվել:

Նրա օրոք ՔՊ-ի գրասենյակը փակվեց Գյումրիում, քանի որ չէր ստացվում կուսակցականներ գտնել:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է, թե ինչ ունեցվածքով է Առուշանյանը հեռանալու պաշտոնից:

Դավիթ Առուշանյանի՝ 2024 թվականի եկամուտների, անշարժ գույքի, ծախսերի եւ շահերի հայտարարագրի համաձայն՝ նա ունի 3 անշարժ գույք. 2 բնակարան, որոնք ձեռք է բերել 2014 թվականին Երեւանում, եւ ավտոկայանատեղի, որն Առուշանյանը գնել է Կենտրոն վարչական շրջանում:

Բայցի այս գույքերից Շիրակի մարզպետը Գյումրիում ունի հիփոթեքով գնած բնակարան, որի հիփոթեքի մայր գումարի մնացորդը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել էր 52 հազար 400 դոլար:

Առուշանյանը 2024 թվականի տարեսկզբին ունեցել է 2 մեքենա՝ NISSAN եւ RANGE ROVER մակնիշների: Տարվա ընթացքում NISSAN մակնիշի մեքենան մարզպետը վաճառել է 3 մլն դրամով:

Նրա բանկային հաշիվների մնացորդները 2023 թվականի համեմատ փոփոխության չեն ենթարկվել եւ տարեվերջին կազմել են 1,5 մլն դրամ եւ 500 հազար դրամ:

Կանխիկ դրամական միջոցները կազմել են 25 հազար դոլար, 18 հազար եվրո, իսկ դրամային փոխարժեքով կանխիկ միջոցները նվազել են 2 մլն դրամով՝ 12 մլն դրամից դառնալով 10 մլն դրամ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է, որ 2025թ. նոյեմբերին 2024թ. նոյեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի 3.8%, իսկ 2025թ. հոկտեմբերի համեմատ՝ 1.3% գնաճ: Հանրապետության դիտարկվող բնակավայրերում 2025թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 0.5-1.8%-ով, այդ թվում՝ համեմատաբար բարձր գնաճներ գրանցվել են Վանաձոր եւ Եղեգնաձոր քաղաքներում: Մայրաքաղաքում սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 1.5%-ով: 2025թ. նոյեմբերին 2024թ. նոյեմբերի համեմատ հանրապետությունում հաճարի գինն աճել է 2.7%-ով, հացինը՝ 3.0%-ով, ալյուրինը՝ 4.8%-ով, հնդկացորենինը՝ 7.9%-ով, մակարոնեղենինը՝ 8.8%-ով, ոլոռինը՝ 9.2%-ով, իսկ 2025թ. հոկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 0.9%, 0.1%, 0.2%, 2.5% 0.8% եւ 0.1%-ով: Թռչնամսի գինը 2025թ. նոյեմբերին 2024թ. նոյեմբերի համեմատ աճել է 1.8%-ով, տավարի, խոզի, գառան մսերի գինը՝ 4.2%, 9.9% 13.5%-ով, իսկ 2025թ. հոկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 0.5%, 1.0%, 0.2% եւ 2.9%-ով: 2025թ. նոյեմբերին 2024թ. նոյեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է մարգարինի եւ կարագի՝ 5.3% եւ 11.9%, իսկ 2025թ. հոկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 1.6% եւ 1.1% գնաճ: «Իշխան» ձկնատեսակի գինը 2025թ. նոյեմբերին 2024թ. նոյեմբերի համեմատ աճել է 13.7%-ով, իսկ 2025թ. հոկտեմբերի համեմատ՝ 1.9%-ով: 2025թ. նոյեմբերին 2024թ. նոյեմբերի համեմատ պահածոյացված կաթի գինն աճել է 1.1%-ով, պանրինը՝ 3.4%-ով, թարմ կաթինը՝ 5.7%-ով, կաթնաշոռինը՝ 7.2%-ով, մածունինը՝ 7.3%-ով, թթվասերինը՝ 8.6%-ով, իսկ 2025թ. հոկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 0.9%, 0.8%, 2.0%, 2.0%, 2.3% եւ 2.8%-ով: Արեւածաղկի բուսական յուղի գինը 2025թ. նոյեմբերին 2024թ. նոյեմբերի համեմատ աճել է 15.0%-ով, իսկ 2025թ. հոկտեմբերի համեմատ՝ 3.0%-ով: 2025թ. նոյեմբերին 2024թ. նոյեմբերի համեմատ ձվի գինն աճել է 3.0%-ով, իսկ 2025թ. հոկտեմբերի համեմատ՝ 2.7%-ով:



Ինչ է այսօր սպասվում Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանին. «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ նրա շուրջ գործընթաց է սկսվում: Այսօր՝ ժամը 10:00-ին, Արցախի նախագահ Շահրամանյանին կրկին հրավիրել են հարցաքննության՝ զինվորական քննչական մարմնում քննվող քրեական վարույթի շրջանակում: Շահրամանյանը հարցաքննվելու է 44-օրյա պատերազմի քրեական վարույթով: Քրեական այս վարույթով նա բազմիցս հարցաքննվել է, սակայն չի բացառվում՝ Շահրամանյանին մեղադրանք առաջադրեն, ու ավելին՝ խափանման միջոցի միջնորդություն ներկայացվի դատարան նրան կալանավորելու համար: Դե իսկ Արցախի ներկայացուցչության շենքը արդեն կխլեն արցախցիների ձեռքից՝ նրան նաեւ այդտեղից դուրս հանելով:



«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Բյուրականի Սուրբ Հովհաննես եկեղեցում նախատեսված միասնական ժամերգությունը այսօր տեղի կունենա ժամը 17:00-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Այս մասին հայտարարություն է տարածել Արագածոտնի թեմը: «Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, տեղեկացնում ենք ամենքիդ՝ դեկտեմբերի 18-ին՝ ժամը 19:00-ին, Արագածոտնի թեմի Բյուրականի Սուրբ Հովհաննես եկեղեցում նախատեսված միասնական ժամերգությունը տեղի կունենա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ժամը 17:00-ին: Հայցում ենք ամենքիդ աղոթական ներկայությունը միասնական ժամերգությանը: Միասին աղոթենք անազատության մեջ գտնվող մեր հոգեւոր հայրերի, ազատազրկված ու գերեվարված զավակների եւ մեր Սուրբ Եկեղեցու անսասանության համար», - ասված է հայտարարության մեջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ԱՐԹՈՒՐ ՎԱՆԵՑՅԱՆԻ ՀԵՏ

«ԱԱԾ-ՈՒՄ ԻՆՁ ԼԱՎ ԵՄ ԶԳԱՑԵԼ, ԲԱՅՑ ՀԻՄԱ ԱՅԼ ԱՌԱՔՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՄ»

«Ժողովուրդի հարցերը» հաղորդման շրջանակում մեր զրուցակիցն է «Հայրենիք» կուսակցության ղեկավար Արթուր Վանեցյանը:

ԱԱԾ նախկին տնօրենը մեզ հետ զրույցում նշել է, որ ԱԱԾ-ում իրեն լավ է զգացել, շատ է սիրել այնտեղի աշխատանքը, սակայն այսօր ընտրել է այլ ուղի:

Հարցազրույցի սկիզբը՝ «Ժողովուրդ» օրաթերթի 17.12.2025 թվականի համարում:

-Պարոն Վանեցյան, Ձեզ փորձում են ներկայացնել որպես հարուստ մարդ, որն ամբողջությամբ կտրված է իրականությունից, չի պատկերացնում, թե ինչպես է ապրում հանրությունը մարզերում եւ ընդհանրապես տեղյակ չէ հասարակության խնդիրներին: Ինչպե՞ս կբացատրեք դա հանրությանը: Օրինակ՝ Ռաֆֆի Հովհաննիսյանը հաճախ շփվում էր մարդկանց հետ, ձեռքով բարեւում, ցույց տալիս, որ հանրության անդամ է, նրանցից մեկն է: Դուք ունե՞ք տարբերակ ապացուցելու, որ իրականությունից կտրված հարուստ մարդ չեք, այլ հասարակության մի մասն եք:

-Նախ՝ «հարուստ մարդ» հասկացությունը հարաբերական է. ինչ-որ մեկի համեմատ հարուստ ես, մեկ ուրիշի համեմատ՝ աղքատ: Ես երբեք չեմ թաքցրել, որ ծնվել եմ նորմալ, միջին ապահովված ընտանիքում, եւ մեր ընտանիքում երբեւէ գոյաբանական խնդիրներ չենք ունեցել: Սակայն երբ իշխանությունները ներկայացնում են որեւէ մեկին որպես հարուստ մարդ, ասում են՝ «Ժողովուրդ, դուք վատ եք ապրում, որովհետեւ կան հարուստ մարդիկ, թալանչիներ»: Այսինքն՝ «հարուստ» եւ «թալանչի» հասկացությունները նույնացնում են:

Իհարկե, երբ իրենք են գնում տներ, ավտոմեքենաներ, հանգստանում լավագույն ծովափերում, դա իրենց դեպքում նորմալ եւ թույլատրելի է, բայց երբ նույնն անում է ուրիշ մեկը, նա արդեն «թալանչի հարուստ» է: Այս երկուսը միտումնավոր հավասարեցվում են:

Ես միշտ կարծել եմ եւ բարձրաձայնել այդ մասին, որ եթե մարդ իր հարստությունը ձեռք է բերել արդար քրտինքով, դա վատ բան չէ: Շատ կուզեի, որ Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի ապրեր արժանապատիվ կյանքով, չունենայինք աղքատներ, ուսման վարձի պատճառով խնդիրներ ունեցող երիտասարդներ, գումարի բացակայության պատճառով բուժօգնություն չստացող մարդիկ:

Վերջին շրջանում ակտիվորեն շրջում եմ թե՛ Երեւանում, թե՛ մարզերում: Երբ ինձ հարցնում են՝ «Պարոն Վանեցյան, ի՞նչ եք անելու, երբ իշխանության գաք», պատասխանում եմ, որ ամեն ինչ շատ պարզ է. պետք է անել ամեն բան, որպեսզի հայ մարդը ապրի լավ: «Լավ ապրելը» ամբողջական փաթեթ է՝ անվտանգային երաշխիքներ, սոցիալական պաշտպանվածություն, արժանապատիվ աշխատանք, նորմալ եկամուտ եւ հնարավորություններ՝ լիարժեք կյանքով ապրելու համար:

Երբ ինձ փորձում են ներկայացնել որպես հարուստ կյանքով ապրող, իրականությունից կտրված մարդ, ուզում եմ ընդգծել, որ դա իրականությանը չի համապատասխանում: Ես ծնվել եմ այս քաղաքում, այստեղ եմ ապրում՝ ամենօրյա սովորական ռեժիմով, ինչպես բոլորը: Իսկ քաղաքական գործունեության շրջանակում շփվում եմ տարբեր մարդկանց հետ, շատ լավ հասկանում եմ, թե մարդիկ ինչ են ուզում եւ ինչի կարիք ունեն: Այդ ուղղությամբ էլ ամեն ինչ անելու ենք, որպեսզի արդարացնենք նրանց սպասելիքները:

-Պարոն Վանեցյան, որտե՞ղ էիք Ձեզ ավելի լավ զգում՝ ԱԱԾ տնօրենի պաշտոնո՞ւմ, թե՞ կուսակցության ղեկավարի:

-Ես ինձ շատ լավ եմ զգացել ԱԱԾ-ում աշխատելու ողջ ժամանակահատվածում՝ սկսած առաջին օրվանից: Դա 2000 թվականն էր, երբ Մասիսի տարածքային բաժնում ստանձնեցի կրտսեր օպերլիազորի պաշտոնը: Այդ օրվանից ինձ շատ լավ եմ զգացել այդ համակարգում: Ես այդ համակարգը շատ սիրում եմ, շատ կարոտում եմ եւ բարձր եմ գնահատում այնտեղ իրականացվող աշխատանքը:

Այդ փուլը, սակայն, իմ կյանքի արդեն անցած էջն է, եւ հետ նայելու տեղ չունեմ: Այսօր ունեմ այլ առաջնահերթություններ, քանի որ ստանձնել եմ կուսակցության ղեկավարի պատասխանատվությունը եւ զբաղվում եմ քաղաքականությամբ: ԱԱԾ-ում ինձ լավ եմ զգացել, սակայն գոհ եմ նաեւ իմ այսօրվա գործունեությունից:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՆՈՐ ՀԱՄԱԶԳԵՍՏ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպմանը պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը ներկայացրել է զինված ուժերի նոր համազգեստի նմուշները:

Սուրեն Պապիկյան հետ հանդիպման եւ բանակի նոր համազգեստի նմուշներին ծանոթանալու վերաբերյալ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը տեսանյութ է հրապարակել «Ֆեյսբուք»-ի իր էջում:

Ի պատասխան վարչապետի հարցադրումների՝ Պապիկյանը հաստատել է, որ համազգեստի նմուշները ընդունվում են փորձարկման, իսկ հաստատում ստանալու դեպքում կմեկնարկի ամբողջ բանակի համար ձեռբերման գործընթացը:

Բացի դրանից, հանդիպմանը նշվել է, որ նոր համազգեստի նմուշները համապատասխանեցված են Հայաստանի պայմաններին, իսկ դիզայնի տարրերն արված են հատուկ պատվերով:

ՀԱՅՐԵՆԻՔ ԵՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ

Ռուսաստանի տասնհինգ քաղաքացի վերադարձել է Ուկրաինայից՝ Ռուսաստանում գտնվող իրենց ընտանիքների հետ վերամիավորվելու համար, բելառուս-ուկրաինական սահմանից հաղորդում է ՏԱՍՍ-ի թղթակիցը:

Ռուսաստանի մարդու իրավունքների հանձնակատար Տատյանա Մոսկալկովայի եւ նրա ուկրաինացի գործընկեր Դմիտրի Լյուբինեցի միջեւ համաձայնեցված մարդասիրական գործողության շրջանակում Ռուսաստան կմեկնեն 12 կին եւ երեք տղամարդ, որոնց մեծ մասը տարեցներ են: Ուկրաինայի քաղաքացիները եւս կվերամիավորվեն իրենց ընտանիքների հետ:

Բելառուս-ուկրաինական սահմանին վերադարձողներին դիմավորել են հարազատները՝ Մոսկալկովայի հետ միասին:

ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական գործընկերության հաստատմամբ Հայաստանի Հանրապետությունը եւ Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունը վերահաստատել են իրենց վճռականությունը խորացնելու հարաբերությունները քաղաքականության, տնտեսության, պաշտպանության, անվտանգության, արդարադատության, մշակույթի, կրթության, շրջակա միջավայրի ոլորտներում, ինչպես նաեւ ուսումնասիրելու դրանց ընդլայնման հնարավորությունները նոր ոլորտներում:

ԱԳ նախարարության մամուլի ծառայությունից հայտնում են՝ Հայաստանը եւ Լյուքսեմբուրգը վերահաստատում են իրենց գործընկերության հիմքում ընկած հիմնարար արժեքները, ներառյալ՝ ժողովրդավարության եւ իրավունքի գերակայության ամրապնդման հանձնառությունը, մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանությունն, ինչպես նաեւ բազմակողմանիության եւ կանոնների վրա հիմնված միջազգային կարգի խթանումը:

Երկու երկրները վերահաստատում են ՀՀ ձգտումը՝ ամրապնդելու իր քաղաքական, տնտեսական, անվտանգային, մշակութային եւ սոցիալական կապերը Եվրոպական միության եւ ժողովրդավարական պետությունների ավելի լայն համայնքի հետ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՆԱԽԱԳԻԾ

Ներքին գործերի նախարարությունն առաջարկում է լրացումներ եւ փոփոխություններ կատարել «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» եւ «Ոստիկանության մասին» օրենքներում, ինչպես նաեւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում:

Գործող օրենսդրությամբ ոստիկանությունն իրավունք ունի տեխնիկական միջոցների կիրառմամբ իրականացնելու միայն արտաշնչած օդի մեջ ալկոհոլի պարունակության միջոցով անձի (վարորդի) սթափության վիճակի զննություն (ոչ սթափ վիճակում գտնվելու փաստի ստուգում), իսկ թմրանյութ օգտագործած վիճակում վարելու կասկածի (բավարար հիմքերի) առկայության դեպքում նշված փաստի ստուգումն իրականացվում է միայն արյան կամ մեզի միջոցով՝ բժշկական կազմակերպությունների կողմից:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է նախատեսել հնարավորություն տեխնիկական միջոցների կիրառմամբ իրականացնելու նաեւ թմրանյութի օգտագործմամբ պայմանավորված ոչ սթափ վիճակում գտնվելու փաստի ստուգում եւ դրա հիմքով կիրառել վարչական պատասխանատվություն:

Օրենքների նախագծերի ընդունմամբ ակնկալվում է առավել գործուն եղանակով կանխարգելել թմրանյութ օգտագործած վիճակում վարելու դեպքերը:

Նախագծերի ընդունմամբ պետական բյուջեում ծախսերի եւ եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում

ՄԵՐԺՈՒՄ

Հակակոռուպցիոն դատարանը մերժեց Գյումրու քաղաքապետարանի դիմաց տեղի ունեցած դեպքերով ձերբակալված երկու եղբայրներ Կարեն եւ Կարուշ Հովեյանների կալանքների երկարացման մասին քննիչների միջնորդությունները: Այս մասին գրել է փաստաբան Արսեն Բաբայանը:

«Հակակոռուպցիոն դատարանը մերժեց Գյումրու քաղաքապետարանի դիմաց տեղի ունեցած դեպքերով ձերբակալված երկու եղբայրներ Կարեն եւ Կարուշ Հովեյանների կալանքների երկարացման մասին քննիչների միջնորդությունները

Վստահաբար կարող եմ պնդել, որ երկու դատական նիստերում էլ իրավաբանությունը հաղթեց քաղաքականությանը:

Եղբայրները դեկտեմբերի 20-ից ազատ կարձակվեն»,- գրել է նա:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ

Թուրքիայից Սիրիա վերադարձող փախստականների թիվը հասել է 580 հազարի: Ինչպես փոխանցում է «ՌԻԱ Նովոստին», այս մասին հայտարարել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Նրա խոսքով՝ Թուրքիան Սիրիայի կառավարությանը տրամադրում է անհրաժեշտ ողջ աջակցությունը «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման դեմ պայքարում:

Ըստ աղբյուրի՝ ներկայում ավելի քան 2 մլն 366 հազար սիրիացի գտնվում է Թուրքիայում՝ ժամանակավոր պաշտպանության ներքո: Թուրքական կողմի տվյալներով Սիրիայի վերականգնման արժեքը ներկայումս գնահատվում է 216 մլրդ դոլար:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ

Հակակոռուպցիոն դատարանում ընթանում է Իջեւանի նախկին քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի ու նրա որդու դատավարությունը:

Վ. Ներսիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 1999-2011 թվականներին, զբաղեցնելով Իջեւան համայնքի ղեկավարի պաշտոնը, 2 դեպքերով պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, որով էական վնաս է պատճառել համայնքի օրինական շահերին, իսկ մեկ դեպքով օրինականացրել է ապօրինի գործողության արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված անշարժ գույքը: Վ. Ներսիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով (2 դրվագ) եւ 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել տնային կալանքը: Նրա որդուն՝ Նաիրի Վարուժանի Ներսիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, միջոցներ տրամադրելով, օժանդակել է Իջեւան համայնքի ղեկավար Վ. Ներսիսյանին՝ վերջինիս պաշտոնական լիազորությունները չարաշահելուն, ինչպես նաեւ խմբի կազմում օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված անշարժ գույքը: Նրան մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգքրի 38-308 հոդվածի 1-ին մասով եւ 190 հոդվածի 2-րդ մասի 2-իդ կետով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել վարչական հսկողությունը: Երեւանում՝ Հակակոռուպցիոն դատարանում, այս քրեական գործով նախնական դատալսումների ժամանակ հանրային մեղադրող Անահիտ Այվազյանը բացարկ է հայտնել նախագահող դատավոր Վարդգես Սարգսյանին, քանի որ Անահիտ Այվազյանը 2022-2023թթ. ընթացքում որպես գործավար աշխատել է սույն գործով նախագահող դատավոր Վարդգես Սարգսյանի աշխատակազմում: Դատավոր Վ. Սարգսյանը, ընդունելով, որ քրեական գործով հանրային մեղադրող Անահիտ Այվազյանը 2022-2023թթ. ընթացքում որպես գործավար աշխատել է իր աշխատակազմում, աշխատանքային գործունեության ընթացքում նախագահող դատավորի եւ սույն գործով հանրային մեղադրողի միջեւ ձեւավորվել են որոշակի փոխհարաբերություններ, որպիսի հանգամանքն անկողմնակալ դիտորդի մոտ կարող է ողջամիտ կասկածներ հարուցել՝ որպես դատավոր Վ. Սարգսյանի անաչառության վերաբերյալ, ըստ այդմ էլ՝ կասկածի տակ կարող է դրվել ինչպես գործի քննության օբյեկտիվությունը, այնպես էլ կայացվելիք դատական ակտի արդարացիությունը: Վերը նշված հիմնավորումներով, ինչպես նաեւ ղեկավարվելով ցանկացած ողջամիտ կողմնակալություն բացառելու ու դատավարության մասնակիցների մոտ կողմնակալության վերաբերյալ պատկերացումները հերքելու կանխավարկածով, դատավորը գտել է, որ նշված գործով անհրաժեշտ է հանրային մեղադրողի հայտնած բացարկն ընդունել: Դատավոր Վ. Սարգսյանը դեկտեմբերի 8-ին որոշել է հանրային մեղադրողի հայտնած բացարկն ընդունել եւ քրեական գործը հանձնել հակակոռուպցիոն դատարանի նախագահին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

700 ՀԱԶԱՐ ԱՄՆ ԴՈԼԱՐԻ ԳՈՒՅՔ ՀԱՓՇՏԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՅԱՆԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻ ԴԵՄ

Երեկ՝ ժամը 11:00-ին, Արթուր Չախոյանը ՀՀ գլխավոր դատախազության գլխավոր մուտքի մոտ, հրապարակային կարգով հաղորդում էր ներկայացնում Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից ցուցաբերված անգործության արդյունքում Երեւան քաղաքից շուրջ 700 հազար ԱՄՆ դոլարի գույք հափշտակելու վերաբերյալ՝ պաշտոնական սուտ եւ կեղծ տեղեկատվություն տրամադրելու միջոցով:



Այս մասին ArmLur.am-ը տեղեկանում է Արթուր Չախոյանի ֆեյսբուքյան էջից:

«Հաղորդումը վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի՝

441-րդ հոդվածով նախատեսված՝ պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու,

445-րդ հոդվածով նախատեսված՝ պաշտոնատար անձի կողմից պաշտոնական շրջանառության մեջ գտնվող կամ շրջանառության ենթակա փաստաթղթի բովանդակությունը աղավաղելու, դրա մեջ կեղծ տեղեկություն մտցնելու, փաստաթուղթն այլ եղանակով կեղծելու, կեղծ փաստաթուղթ կազմելու կամ տրամադրելու, ինչպես նաեւ փաստաթղթերի գրանցման տեղեկատվական համակարգում կեղծ տեղեկություն մուտքագրելու,

447-րդ հոդվածով նախատեսված՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը եւ շենքերի կամ շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու կամ պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելու,

ինչպես նաեւ 448-րդ հոդվածով նախատեսված՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը չդադարեցնելու եւ դրա հետեւանքները չվերացնելու, ինչպես նաեւ ինքնակամ շենքերի եւ շինությունների կառուցումը չդադարեցնելու եւ անօրինական կառույցները չքանդելու արարքների հատկանիշների առկայությանը:

Իսկ առավել հստակ՝ եթե «արդարադատությունը» գործի օրենքի պահանջներին համապատասխան, ապա իմ հրապարակային հաղորդումից հետո մի խումբ անձինք, այդ թվում՝ Տիգրան Ավինյանը, պետք է ձերբակալվեն, սակայն բոլորս էլ գիտակցում ենք, որ դա տեղի չի ունենա», - գրել է բլոգերը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՔԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ ԵՄ–ԻՆ՝ ՀՀ–Ի ԿՈՂՄԻՑ

Հայաստանը արտաքին միջամտության փորձի հավանականություն է տեսնում, այդ պատճառով Եվրամիությունից աջակցություն է խնդրել 2026-ի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ նկատվող հիբրիդային սպառնալիքների դեմ պայքարելու համար:

Լրագրողների հետ զրույցում այս մասին ասաց ՀՀ ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը:

«Սպառնալիքները հայտնի են: Հայաստանի ներքաղաքական դաշտում կան դրսեւորումներ, որոնք կարող են մեկնաբանվել որպես միջամտության փորձ: Ապատեղեկատվական արշավներ են տեղի ունենում մեր լրատվական դաշտում, բացվում են կայքեր, որտեղ սենսացիոն կեղծ լուր են գրում, օրինակ՝ Փաշինյանը Կանադայում տուն է գնել...»,- ասաց Ռուբինյանը:

Նա նկատեց՝ այդ լուրերը գրվում են նորահայտ անգլալեզու կայքում, օրեր անց հայտնվում են հայկական լրատվամիջոցների էջերում:

«Տեսնում ենք հավանականություն, որ կարող է լինել միջամտության փորձ: Եվ այդ միջամտությունը կանխելու մեր գործիքակազմը մեծացնում ենք»,- ասաց Ռուբինյանը՝ հավելելով, որ նկատի ունի ցանկացած արտաքին միջամտության փորձ:

Եվրամիության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր հանձնակատար Կայա Կալասը հայտարարել էր, որ Հայաստանը Եվրամիությունից աջակցություն է խնդրել երկրում 2026 թվականին կայանալիք խորհրդարանական ընտրություններին ընդառաջ նկատվող հիբրիդային սպառնալիքների դեմ պայքարելու համար:

ԱՄՆ–Ն ԱՐԳԵԼԵԼ Է ՅՈԹ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ

Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփը 2026 թվականի հունվարի 1-ից Միացյալ Նահանգներ մուտքի լիակատար արգելք է սահմանել եւս յոթ պետությունների քաղաքացիների համար: Այս մասին հայտարարությունը հրապարակվել է Սպիտակ տան կայքում:

Արգելքը սահմանվել է Բուրկինա Ֆասոյի, Մալիի, Նիգերի, Հարավային Սուդանի եւ Սիրիայի քաղաքացիների համար: Հրամանագիրը նաեւ նախատեսում է ԱՄՆ մուտքի արգելք եւ սահմանափակումներ «այն անձանց համար, ովքեր ճանապարհորդում են Պաղեստինի ինքնավարության փաստաթղթերով»: Մուտքի լիակատար արգելք է սահմանվել նաեւ Լաոսի եւ Սիեռա Լեոնեի քաղաքացիների համար, որոնց նկատմամբ նախկինում գործում էին մասնակի սահմանափակումներ:

Հայտարարության մեջ ընդգծվում է, որ Թրամփն ուժի մեջ է թողել ԱՄՆ մուտքի արգելքն Աֆղանստանի, Հայիթիի, Իրանի, Եմենի, Լիբիայի, Մյանմայի, Կոնգոյի Հանրապետության, Սոմալիի, Սուդանի, Չադի, Հասարակածային Գվինեայի եւ Էրիթրեայի քաղաքացիների համար:

Բացի դրանից, մուտքի մասնակի սահմանափակումներ են կիրառվում Անգոլայի, Անտիգուա եւ Բարբուդայի, Բենինի, Կոտ դ՛ Իվուարի, Դոմինիկայի, Գաբոնի, Գամբիայի, Մալավիի, Մավրիտանիայի, Նիգերիայի, Սենեգալի, Տանզանիայի, Տոնգայի Թագավորության, Զամբիայի եւ Զիմբաբվեի քաղաքացիների համար:

Սահմանափակումները մասամբ մեղմացվել են Թուրքմենստանի նկատմամբ, այժմ Միացյալ Նահանգներն այդ երկրի քաղաքացիների համար մուտքը թույլատրում է ոչ ներգաղթային այցագրերով:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԸ ԿԳԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) գլխավոր քարտուղարի տեղակալ Ռադմիլա Շեկերինսկան այսօր՝ դեկտեմբերի 18-ին կայցելի Հայաստան:

Այս մասին նշված է Հյուսիսանտլանտյան դաշինքի տարածած մամուլի հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ այցի ընթացքում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալը հանդիպումներ կունենա Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի, ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի, ինչպես նաեւ Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի հետ:

Շեկերինսկան նաեւ կհանդիպի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների եւ ՆԱՏՕ-ի անդամ երկրների՝ Հայաստանում հավատարմագրված դեսպանների հետ:

ԱՆԿԱԽ ԹԵ՞ ԿԱԽՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ

ՍԱՍՈՒՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ՝ ՍԵՎԱՆԻ ՏՆԱԿՆԵՐԸ ՔԱՆԴՈՒՄ ԵՆ

ՀՀ Կառավարության վերջին նիստում գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի հայտարարությունը հնչեց կտրուկ ու աներկբա. Սեւանա լճի տարածքում ապօրինի կառուցված մի շարք շինություններ պետք է հողին հավասարեցվեն՝ անկախ սեփականատիրոջ անունից ու քաղաքական անցյալից:

Խոսքը վերաբերում էր շինություններին, որոնք, ըստ հրապարակված տեղեկությունների, պատկանում են ՍԴ դատավոր Հրայր Թովմասյանի սանիկ Նորայր Փանոսյանին, ԵԿՄ նախագահ Սասուն Միքայելյանին, ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանին եւ ԱԺ նախկին պատգամավոր Ռուբեն Հայրապետյանին: Այս հայտարարությունից օրեր անց ArmLur.am-ի նկարահանող խումբը Սեւանա լճի տարածքում արձանագրեց կոնկրետ գործողություններ: «Սեւան» ազգային պարկի աշխատակիցները՝ պարկի տնօրեն Կարեն Մնացականյանի գլխավորությամբ, Գլխավոր դատախազի հրահանգով, Գեղարքունիքի մարզային դատախազ Գագիկ Այվազյանի հսկողությամբ սկսել են ապամոնտաժման աշխատանքներ:

Սկիզբը դրվել է Սասուն Միքայելյանին պատկանող առափնյա մի քանի տնակներից:

Ի՞նչ է իրականում քանդվում

ArmLur.am-ի տեսախցիկը ֆիքսել է մի պատկեր, որը դժվար է անվանել «ապօրինի կառուցապատում»: Ֆիքսել ենք՝

- հիմնականում երկաթյա, ժանգոտ, տարիներով չօգտագործվող տնակներ,
- արտաքինով մետաղաջարդոն հիշեցնող կառույցներ,
- կան ընդամենը 4 երկաթե տնակներ, որոնց վրա քարեր են ամրացված:

Յուցադրական մաքրում՝ քաղաքական ուղերձով

Մեծ հաշվով ստեղծված պատկերը ավելի շատ շոու է հիշեցնում, քան համակարգային պայքար ապօրինի կառուցապատումների դեմ: Քանդվում են ոչ թե Սեւանի էկոհամակարգին ամենամեծ վնաս հասցնող, այլ արդեն իսկ անպիտան, տարիներով լքված կառույցներ:

Հասկանալի է, որ սա արվում է ասելու համար, թե անգամ ՔՊ-ի հիմնադիրներին չեն խնայում: Ի դեպ, ըստ Նիկոլ Փաշինյանի ընտանեկան «Հայկական ժամանակի»՝ Սեւանա լճում կան 3800 շենք-շինություններ՝ բազմահարկ, կապիտալ, բետոնե, որոնք ոչ միայն չեն ապամոնտաժվում, այլեւ տարիներ շարունակ անխոչընդոտ շահագործվում են:

ArmLur.am-ը փորձեց քանդման աշխատանքներին ներկա Գեղարքունիքի մարզային դատախազ Գագիկ Այվազյանից պարզել, թե ինչ է կատարվում. նա փախչեց եւ խուսափեց հարցերին պատասխանելուց:

Փորձեցինք իրավիճակի շուրջ մեկնաբանություններ ստանալ էկոպարեկային ծառայության Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզային վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Հովիկ Սաֆարյանից, ով ոստիկանական ուժեր էր բերել եւ տեխնիկան էր ապահովել: Սակայն նա էլ կցկտուր ու վախվորած երկու բառ ասաց եւ հեռացավ:

Սեւանա լճի ափին արված գործողությունները կարելի է բնութագրել որպես սիմվոլիկ արդարադատություն. քիչ ռիսկ, բարձր աղմուկ, տեսախցիկներ, բայց արդյունքը՝ ոչինչ: Մինչդեռ Սեւանի իրական փրկությունը պահանջում է ոչ թե հնամաշ տնակների ցուցադրական քանդում, այլ թվերով, անուններով եւ հասցեներով հստակ ռազմավարություն: Սա ավելի շատ հիշեցնում է քաղաքական PR նախընտրական Հայաստանում՝ թե Փաշինյանը անգամ իր թիմակցին չի խնայում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԹՄՐԱՆՅՈՒԹ ԵՆ ԻՐԱՑՐԵԼ

Նոյեմբերի 27-ին Համայնքային ոստիկանության Հրազդանի բաժնի ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ գյումրեցի մի տղամարդ իր մոտ եւ մեքենայում ապօրինի պահում եւ, այդ օրն էլ Հրազդան քաղաքում տեղադրելու միջոցով, իրացնում է թմրանյութ:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում ոստիկանները գյումրեցու վարած «Մերսեդեսը» հայտնաբերեցին Շահումյան փողոցում: 35-ամյա գյումրեցին հոր եւ կնոջ հետ էր, քաղաքի տարբեր հատվածներում արդեն տեղադրել էին թմրանյութով փաթեթներ եւ հեռախոսով լուսանկարել դրանք:

Ժամը 15:30-ին Հրազդան քաղաքի Ռաֆֆու փողոցում գյումրեցիները ձերբակալվեցին եւ մեքենայով հանդերձ տեղափոխվեցին բաժին: Որդու խուզարկությամբ հայտնաբերվեց թմրամիջոցի հինգ փաթեթ:

Ըստ նրա՝ հայտնաբերված փաթեթներում թմրանյութ էր, որը ձեռք էր բերել տելեգրամյան ալիքի միջոցով՝ տեղադրելով իրացնելու նպատակով: Նա հայտնեց նաեւ, որ ավտոմեքենայի հետեւի նստատեղին եւս կան թմրամիջոցով փաթեթներ:

Ավտոմեքենան տեղափոխվեց պահպանվող հատուկ տարածք, իսկ կազմված փաստաթղթերը ներկայացվեցին Կոտայքի մարզային քննչական վարչություն:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված դեպքի վայրի զննությամբ Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի հարեւանությամբ գտնվող կիսաքանդ պատնեշի մոտ՝ երեք առանձին հատվածներում, հայտնաբերվեց նրանց տեղադրած երեք փաթեթ:

Դատարանի որոշմամբ հաջորդ օրը խուզարկվեց նաեւ «Մերսեդեսը». սրահում հայտնաբերվեց թմրանյութով եւս 20 փաթեթ:

Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱԲՈՒՅԹ Է ԸՆԴՈՒՆՎԵԼ

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ Պետական եկամուտների կոմիտեի «Արարատյան» մաքսատուն-վարչության նախկին գլխավոր մաքսային տեսուչ Սամվել Մանվելի Հովեսյանից եւ նրան փոխկապակցված անձից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

1) 3 անշարժ գույք
2) 1 գույքի գնման իրավունք
3) 1 տրանսպորտային միջոց
4) 1 իրավաբանական անձում մասնակցություն
5) 30 միլիոն 581 հազար դրամ ներդրված ավանդի գումար
6) 1 փոխառության պահանջի իրավունքի ապօրինի մասը՝ 1 միլիոն 759 հազար դրամ

945 հազար դրամ՝ որպես ապօրինի եկամուտների եւ միջոցների մնացորդ:

22 միլիոն 661 հազար դրամ, որը 2017-2025 թվականների ընթացքում չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել՝ հիմք ընդունելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ՏԱՆԻՑ՝ ԴԱՏԱՐԱՆ

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գեւորգյանին տարել են Հակակոռուպցիոն դատարան, քանի որ նախաքննական մարմինը միջնորդություն է ներկայացրել:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն միջնորդել է ռեկտորի տնային կալանքը 2 ամսով երկարեցնել, սակայն դատարանը միջնորդությունը բավարարել է մասնակի եւ կալանքը երկարաձգել է 1 ամսով:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 10-ին ձերբակալվել էին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գեւորգյանը եւ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը:

Ըստ պաշտոնական պարզաբանման՝ վերջիններս մեղադրվում են համալսարանի տարբեր աշխատակիցներից կազմված հանցավոր կազմակերպություն ստեղծելու եւ ղեկավարելու, առանձնապես խոշոր չափերով վատնում եւ խարդախություն կատարելու, ինչպես նաեւ կաշառք ստանալու համար: Քրեական վարույթի շրջանակներում ձերբակալվել են նաեւ համալսարանի մի շարք այլ աշխատակիցներ:

ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում ավարտվել է Ծափաթաղում 3-ամյա երեխայի սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Տ.Օ.-ի հայրը վրեժի շարժառիթով 2025 թվականի հոկտեմբերի 27-ին իր մերձավոր ազգական հանդիսացող, անօգնական վիճակում գտնվող, անչափահաս երեխային ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, Ծափաթաղ բնակավայրին հարակից դաշտամիջյան հատվածում ձեռքով կոկորդից սեղմելու եղանակով սպանել է նրան, ապա դիակը դաշտամիջյան տարբեր հատվածներում թաքցնելուց հետո տեղափոխել է Ճամբարակ համայնքի Ջիլ բնակավայր տանող խաչմերուկին հարակից դաշտամիջյան հատված, որտեղ 2025 թվականի նոյեմբերի 2-ին որոնողափրկարարական աշխատանքների արդյունքում դիակը հայտնաբերվել է:

Կատարվել է դիակի արտաքին զննություն, որի ընթացքում Տ.Օ.-ի մարմնի գլխի շրջանում հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ:

Համաձայն դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ 3-ամյա երեխայի մահը վրա է հասել մեխանիկական շնչահեղձության՝ պարանոցի օրգանների բութ առարկաներով սեղմման հետեւանքով:

Ա.Օ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ եւ 9-րդ կետերով (անօգնական վիճակում գտնվողի, անչափահասի սպանությունը մերձավոր ազգականի կողմից):

Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 16-ից 17-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 142 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՄՅԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿ

ԱՍՏՂԵՐԸ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ, ԲԱՅՑ ՉԵՆ ՊԱՐՏԱԴՐՈՒՄ

Նախարարությունը, դիմադրության ալիքը եւ սառնաարտությունը. Սարգսյանի 2026-ի ուղեցույցը
ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյան

Փորձագիտական աշխարհից, օրինաստեղծ նախարարությունով մինչեւ երկրի ներքին գործերի առաջին կին նախարարի պաշտոնին հասած Արփինե Սարգսյանը, ունենալով իր շուրջ դիմադրության հսկա ալիք, կարողացավ դա հաղթահարել եւ ճտպտան բնավորությունով ենթարկեցնել համակարգի ամենաազդեցիկ ու ինքնուրույն թվացող հնաբնակներին:

Անցնող տարին շան տարում ծնված նախարարի համար կայունության խորհրդանիշ էր՝ չնայած զանգվածային անկարգությունների, սպանության դեպքերի եւ այլ հանցատեսակների այդքան աճին: 2026-ը եւս խոստանում է խոյերի համար լինել կանխատեսելի, եթե ամեն ինչ գնա այնպես, ինչպես պլանավորում է գործող իշխանությունը: Սակայն 2026-ը վճռորոշ տարի է, քանի որ 8 տարի իշխանության եղած Փաշինյանի կառավարությունը հասցրել է ձանձրացնել հանրության լայն շերտերին: Աստղերը հուշում են պահպանել հանգստություն, սառնասրտություն եւ անհրաժեշտ պահին աթոռին հրաժեշտ տալու կամք, որպեսզի ապագան առավել պայծառ դրսեւորումներ ունենա:

Խելոք կատարողը՝ վարչապետի աչքի առաջ. 2026-ի կանխատեսումը
ՀՀ շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթեւոսյան

Բրյուսովի սկանդալը կասեցնելու անկարողությամբ մամուլում հայտնի այս նախարարը նշանակվել է COP-ի միջոցառումը պատշաճ կազմակերպելու համար, քանի որ, ըստ համացանցի, նախորդ նախարարի հարբեցողության ու հայհոյախոսության հակումները տապալել էին ոլորտի կառավարման շատ ճյուղեր: Աստղերը հուշում են լինել առավել զգուշավոր, քիչ նախաձեռնող եւ խելոք կատարող, որ Փաշինյանի իշխանության ներսում երկարակեցություն ունենաք: Կապիկի տարում ծնվածների համար 2026-ը խոստանում է ապահովել կայունություն, եթե խելամտության գիծը չանցնեք:

Անտեսանելի, բայց ազդեցիկ. համեստ ուսուցչի քաղաքական մարաթոնը
ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյան

2018 թվականից Քվանտ վարժարանից դուրս եկած Պապիկյանը իր ուժերը փորձեց շատ բնագավառներում. քաղաքային կառավարումը՝ որպես ավագանու անդամ, չստացվեց, նախարարի կարգավիճակով մրցույթ կազմակերպելը արդեն հաջող էր, ասֆալտ փռելը՝ աղմկահարույց, պաշտպանությունը՝ առավել գաղտնի: Ոչ տեսնում ենք, ոչ լսում: Միայն հայտնի է, որ համեստ ուսուցիչը հասցրել է հիոթեքները մարել, տներ ունենալ, թիկնազորով է շրջում, բայց փորձում է պահել անձնական որակները, մարդկային դեմքն ու անցյալի հետ ներդաշնակության նշույլները:

Վագրերին աստղերը հուշում են հեռու մնալ Փաշինյանի հետ շփումներից՝ հատկապես եկեղեցականների դեմ պայքարի տապալումից հետո: 2026-ի ընտրություններից հետո գուցե իրավիճակ փոխվի, բայց տուրբուլենտությունը, որ այսօր կա, գուցե մինչ այդ հաղթահարված լինի:

Ամեն ինչ ունենալու նախարարությունը. նախաձեռնողականությունը՝ դեմքի արտահայտությունն է.
ՀՀ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների զարգացման ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյան

Արմավիրից Կառավարություն հասած այս պաշտոնյան պարտական է Նիկոլ Փաշինյանին՝ իր կյանքում ամեն ինչ ունենալու եւ ամեն ինչի հասնելու համար: Նախկին վարկային մասնագետը հիմա նախարար է դարձել ու ղեկավարում է սուպերնախարարություն: Իհարկե, նախաձեռնողականություն չունի, առաջարկների հարցում ակտիվ չէ, միայն նայում է Փաշինյանի դեմքի արտահայտություններին, որ հասկանա՝ ինչն ինչպես անել: Աստղերը հուշում են 2026-ին ընդառաջ հավատարմության եւ ծառայելու կարողության նոր նշաձողեր սահմանել, որպեսզի մյուս երազանքն էլ իրականանալի դառնա՝ փոխվարչապետի պաշտոնը: Ոչխարի տարում ծնված նախարարների համար եւս պլանավորված է անկայունություն, բայց դրանք կդառնան կառավարելի, եթե կուսակցական կյանքում ցուցանիշներ ապահովեք՝ արթնացնելով միջի առյուծ հորոսկոպին:

Եկեղեցական ծեսերից մինչեւ քաղաքական կայունություն. ԲԴԽ նախագահի աստղագուշակը
ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Արթուր Աբաբեկյան

Սահմանադրական անկախ մարմնի՝ ԲԴԽ նախագահի պաշտոնը զբաղեցնող այս պաշտոնյան ամենեւին էլ ամեանկախը չէ, եւ ԲՊ իշխանությունից իր կախվածությունը ամրագրված է եկեղեցական ծեսերով: Հայաստանի ամենաթունավոր պաշտոնը զբաղեցնող Աթաբեկյանի համար, սակայն, 2025-ը անկայունությամբ աչքի չընկավ: Նա թեեւ ամբողջությամբ իր անկախությունը «մատաղ է արել» փաշինյանի ոտքերի տակ, այնուամենայնիվ, պետք է արձանագրենք, որ հասել է այն հանգրվանին, որ Նիկոլ Փաշինյանն այլեւս դատավորներին վնգստացող չի հանրահռչակում: Աստղերը հուշում են շան տարում ծնված Աթաբեկյանին շարունակել պահպանել չեզոքությունը բոլոր իմաստներով, քանի որ անցնող տարում Դուք հասկացաք, որ դա է Փաշինյանի իշխանության մեջ երկարակեցության գաղտնիքը: Առյուծների համար կյանքը հրաշալի է 2026-ին, քանի որ քաղաքական տարի է՝ պետության գլուխը՝ խառը:

Ցլերի սպասումը եւ շարժումների սահմանափակման անհրաժեշտությունը.
ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

Ամենայուղոտ պաշտոնը զբաղեցնելով՝ անցնող տարում կարողացաք պահպանել կայունությունը ինչպես ֆինանսական, այնպես էլ պաշտոնական կյանքում: Համեստ կեցվածքով ազդեցիկ այս պաշտոնյայի համար գալիք տարին ճակատագրական է. Կշարունակի՞ մնալ իր պաշտոնում, թե՞ կհեռանա. կախված կլինի Նիկոլ Փաշինյանի տրամադրությունից, բարեհաճությունից եւ օրվա տրամադրվածությունից: Աստղերը հուշում են ցլերին ավելորդ շարժումներ չանել եւ լուռ, համեստ սպասել Փաշինյանի մեսիջներին կամ էլեկտրոնային հասցեին ուղարկած նամակներին:

Թրամփից մինչեւ ԱԺ ապագա. Ռուբեն Ռուբինյանի քաղաքական մարաթոնը
ԱԺ փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյան

Ճարտարասաց այս պաշտոնյան կարողացել է իր գործունեությամբ եւ կեցվածքով հասնել ոչ միայն ԱԺ փոխխոսնակի պաշտոնին, այլեւ համարվել ԱԺ ապագա նախագահի ամենահավանական իշխանական թեկնածուն: 2025 թվականը Թուրքիայի հատուկ բանագնացի համար կայունության տարի էր, կարողացավ հաջողություններում «մասնաբաժին» ունենալ՝ լինելով սպիտակ տանը՝ լուսանկարվելով Դոնալդ Թրամփի հետ: 2026-ը խոստանում է լինել տուրբուլենտային տարի, սակայն դա Ռուբեն Ռուբինյանին չի սպառնում, քանի որ ձիու տարում ծնված ԲՊ-ական փոխխոսնակի համար ապայագում էլ ամեն ինչ հաջող է գնալու: Աստղերը հուշում են լավ պահել արջամկանը, ժամանակ հատկացնել նորածին բալիկի հետ անցկացնելու համար, քանի որ Ձեր քաղաքական ջանքերը վաղուց գնահատված են՝ ըստ արժանավույնս:

Քավորին ուրանալուց մինչեւ կուսակցական վերելքներ. 2026-ի աստղագուշակ
ՀՀ Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյան

Սերժ Սարգսյանի թիմից Նիկոլ Փաշինյանի հեղափոխական շրջապատ տեղափոխված, պաթոսական ելույթներով աչքի ընկած Պապոյանի համար տարին գլխապտույտ հաջողություններ ունեցավ: Թեեւ հարազատ քեռին անգամ հրապարակավ անպատվեց ու նախատեց նրան, սեփական քավորը հրաժարվեց նրա հետ շփումներից, բայց նախարարի պաշտոնն ու Փաշինյանին ծառայությունները Պապոյանն ավելի բարձր է գնահատում, քան այլ՝ հատկապես բարոյական արժեքները: Անգամ անասնակերը որպես ցորեն մատուցելու խայտառակ պատմությունից հետո Պապոյանը դեռ շարունակում է կուսակցական վերելքները: Աստղերը հուշում են նապաստակներին անձնական բարեկեցությունն ու բիզնես քվոտաների բաշխումը կառուցել զգույշ, արտահայտություններում՝ լինել առավել ուշադիր, որ նոր սկանդալներում չհայտնվեք: Ձրիոսների համար 2026-ը նախատեսում է անկայունություն, եթե շարունակեք շատախոսել կամ վիդեոռիլ նկարել գործի փոխարեն:

ՔՊ-ի արխիվի մշտական բնակիչը. Անդրանիկ Քոչարյանի 2026-ի ճակատագիրը
ՀՀ ԱԺ ՊՆ եւ ԱԱ հարցերի հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյան

ՔՊ-ի ամենամեծ հակավարկանիշն ունեցող գործիչ, որի մասին հիշատակումները հիմնականում բացասական երանգ ունեն: Խարդավանքների, իրար դեմ հանելու, կանանց վիրավորելու գործում խմբակցության առաջամարտիկ այս ծերունին առաջվա ազդեցությունը, իհարկե, չունի: Մնացել են իմիտացիաները: Անգամ երաշխավորություն ստանալու հարցում լրջագույն դժվարությունների է հանդիպել՝ ստանալով տարբեր մերժումներ: 2025 թվականը անկումների տարի էր Անդրանիկ Քոչարյանի համար. չգնահատվեցին ոչ նա, ոչ նրա զեկույցը, եւ ԱԺ նախագահը նրան իր զեկույցի հետ ուղարկեց քաղաքական արխիվ: 2026-ը եւս լավ խոստումներ չի շռայլում Անդրանիկ Քոչարյանի համար. նրանից Նիկոլ Փաշինյանն էլ է երես թեքել: Աստղերը հուշում են արժանապատիվ հեռանալ, քան կռիվ տալ ներսում՝ գիտակցելով, թե ինչքան մերժելի եք:

Քաղաքական կաղիկի տարում Վահագնի աստղային զգուշությունը. 2026-ի աստղագուշակ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյան

ԿԸՀ նախագահ, Նիկոլ փաշինյանի ընտանեկան թերթի նախկին լրագրող: Մարդ, որը Նիկոլ Փաշինյանին համարել է իր հոգեւոր հայրը եւ արել ամեն ինչ նրան գոհացնելու համար, հիմա դարձել է «անկախ» մարմնի ղեկավար եւ ձեւացնում է, թե կուսակցաշինության, քաղաքականության հետ կապ չունի: Երկրի թիվ մեկ թվանկարիչը դարձած այս պաշտոնյան, որ հաջողությամբ կարողացավ հետհեղափոխական Հայաստանում իր երկու որդիներին ազատել բանակի պարտադիր զինծառայությունից, հիմա վայելում է իր Քաջ Նազարի բախտը: Աստղերը հուշում են 2026-ին ընդառաջ պահպանել համեստություն, ավելորդ աչքի ընկնող քայլեր չանել, որ Նիկոլ Փաշինյանը չբարկանա եւ ընտրությունների վատ արդյունքների համար մի հրաժեշտի SMS չգրի:

2026-ին ընդառաջ՝ հումորային շարք, որը 15 տարի «Ժողովուրդ» օրաթերթը պահում է որպես անխախտ ավանդույթ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 25 պատահար, 33 մարդ մահացել է ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ID ՏԱՂԱՎԱՐ. Big Christmas Market

Դեկտեմբերի 17-ին տոնական վառ տրամադրությամբ մեկնարկեց ամենամեծ ու հեքիաթային Big Christmas Market with Coca-Cola 2025 ցուցահանդես-տոնավաճառը: Արդեն 5-րդ տարին անընդմեջ տոնավաճառն իրական ամանորյա շունչ է բերում՝ հարյուրավոր բազմազան տաղավարներով, անակնկալներով ու նվերներով:

Այս տարի էլ միանալով գեղեցիկ ավանդույթին՝ IDBank-ը եւ «Իդրամը» ID տաղավարում դիմավորում էին հյուրերին բացառիկ առաջարկներով ու անակնկալ նվերներով:

«Իդրամի» եւ IDBank-ի մարքեթինգի ղեկավար Տաթեւիկ Հովհաննիսյանի խոսքով՝ տոնավաճառի օրերին գործելու են idplus-ի նվեր-քարտեր շահելու եւ idcoin-եր ստանալու առաջարկները. «Մեր արդեն սիրված idcoin-ը տոնավաճառի ողջ ընթացքում կուրախացնի այցելուներին, ընդամենը պետք է այս 5 օրերի ընթացքում Big Christmas Market-ի վաճառակետերում վճարել Idram&IDBank-ով, եւ ամեն վճարումից կստանաք մինչեւ 30% ակնթարթային idcoin՝ հանրագումարային առավելագույնը մինչեւ 10.000 idcoin»:

Բացի այդ, այցելուներն ունեն idplus-ի նվեր քարտեր շահելու հնարավորություն.

կատարեք միանվագ 10.000 ՀՀ դրամի եւ ավելի առնվազն 3 QR վճարում Idram&IDBank հավելվածով,

կամ 5.000 ՀՀ դրամի եւ ավելի առնվազն 3 QR վճարում Rocket Line 0%-ով՝ ըստ սահմանված ժամկետների եւ պայմանների,

վճարումները հաստատող էլեկտրոնային անդորրագրերով եկեք մեր տաղավար եւ ստացեք հնարավորություն տանելու 3.000-20.000 ՀՀ դրամին համարժեք idplus-ի նվեր-քարտ:

Ի դեպ, կարեւոր է հիշել, որ առաջարկի շրջանակներում idplus-ի նվեր-քարտ կարող եք ստանալ 1 անգամ:

Առաջարկները կգործեն Big Christmas Market ցուցահանդես-տոնավաճառի շրջանակներում՝ դեկտեմբերի 17-ից 21-ը ներառյալ: Բաց մի թողեք ամանորյա հեքիաթային տրամադրությամբ ձեր նվերներն ու գնումները կատարելու հնարավորությունը՝ ստանալով բազմաթիվ բոնուսներ ու անակնկալներ:

Ընկերությունները վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից:

ԵՎՐՈՊԱՆ ՊԵՏՔ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԼԻՆԻ

Եվրոպան պետք է պատասխանատու լինի իր սեփական անվտանգության համար: Այս մասին դեկտեմբերի 17-ին Եվրախորհրդարանում հայտարարել է Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը:

«Սա այլեւս այլընտրանք չէ: Սա պարտադիր է», - ասել է նա:

Reuters-ի փոխանցմամբ՝ նա ընդգծել է, որ Եվրոպան «չի կարող թույլ տալ, որ ուրիշները որոշեն իր աշխարհայացքը»՝ հավելելով, որ չնայած ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարությունը մատնանշում է համաշխարհային ՀՆԱ-ում Եվրոպայի բաժնի նվազման միտումը՝ Միացյալ Նահանգները գտնվում է «նույն ճանապարհին»:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՄԻԱՑԵԼ Է ՓԱՇԻՆՅԱՆԻ ՊԱՀԱՆՋԻՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

ArmLur.am-ը ներկայացնում է բոլոր այն բարձրաստիճան հոգեւորականներին՝ եպիսկոպոսներին ու արքեպիսկոպոսներին, որոնք հանդիպում են ունեցել Նիկոլ Փաշինյանի հետ եւ միացել վերջինիս պահանջին՝ Կաթողիկոսի հեռացման վերաբերյալ:

Այդ բարձրաստիճան հոգեւորականներն են Տեր Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը, Տեր Առաքել արքեպիսկոպոս Քարամյանը, Տեր Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյանը, Տեր Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը, Տեր Արտակեպիսկոպոս Տիգրանյանը, Տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը, Տեր Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, Տեր Սիոն արքեպիսկոպոս Ադամյանը:

Այժմ ներկայացնենք Տեր Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանին

Հոգեւորականը ծնվել է 1961 թվականին Եղեգնաձորի Ռինդ գյուղում:

2010 թվականից Տեր Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը Վայոց ձորի թեմի առաջնորդ է: Մինչ այդ՝ 1993-2010 թվականներին, նա առաջնորդել է Սյունիքի թեմը:

Արքության պատվին (արքեպիսկոս) արժանացել է 2013 թվականին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Կոնդակով, իսկ եպիսկոպոս է ձեռնադրվել 1996 թվականին՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայան Հայոց Կաթողիկոսի:

1992 թվականին ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճաններ՝ ձեռամբ Տեր Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի (թեզ՝«Հայր մեր»-ի մեկնությունները հայ մեկնողական գրականության մեջ (ըստ Եղիշեի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Վարդան Արեւելցու եւ Գրիգոր Տաթեւացու)»:

1987 թվականին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տեր Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի եւ սարկավագ է նշանակվել 1986 թվականին՝ ձեռամբ Տեր Հուսիկ արքեպիսկոպս Սանթուրյանի: Հեղինակ է «Նախաշավիղ քրիստոնեական կրթության», ««Հայ Մեր»-ի մեկնություններն՝ ըստ Գրիգոր Տաթեւացու», «Էջեր Սյունյաց Աթոռի պատմությունից» գրքերի ու գիտական աշխատանքների:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹՐԱՄՓԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ ԱՄՆ-ի զինված ուժերը կընդլայնեն իրենց ներկայությունը Վենեսուելայում այնքան ժամանակ, մինչեւ այն Վաշինգտոնին չվերադարձնի նախկինում գողացված նավթը, հողերը եւ այլ ակտիվներ:

Դոնալդ Թրամփն այդ մասին գրել է Truth Social հարթակում:

«Վենեսուելան ամբողջությամբ շրջապատված է Հարավային Ամերիկայի պատմության մեջ ամենամեծ նավատորմով: Այն ավելի կմեծանա, եւ ցնցումը նրանց համար կլինի աննախադեպ այնպես, ինչպես երբեք չեն տեսել: Սա կշարունակվի մինչեւ այն պահը, երբ նրանք Միացյալ Նահանգներին վերադարձնեն մեզանից նախկինում գողացված ողջ նավթը, հողը եւ այլ ակտիվները», - գրել է Թրամփը:

«Մադուրոյի անօրինական ռեժիմն այս գողացված նավթահանքերից նավթն օգտագործում է իրենց ֆինանսավորելու, թմրանյութերի ահաբեկչության, մարդկանց թրաֆիքինգի, սպանության եւ առեւանգման համար: Մեր ակտիվների գողության եւ շատ այլ պատճառներով, այդ թվում՝ ահաբեկչության, թմրանյութերի մաքսանենգության եւ մարդկանց թրաֆիքինգի համար, Վենեսուելայի ռեժիմը ճանաչվել է որպես օտարերկրյա ահաբեկչական կազմակերպություն: Հետեւաբար, այսօր ես հրամայում եմ Վենեսուելա մտնող եւ այնտեղից դուրս եկող պատժամիջոցների տակ գտնվող բոլոր նավթատարների լրիվ եւ ամբողջական շրջափակում»,- նշել է Թրամփը գրառման մեջ:

Նախորդ շաբաթ Վաշինգտոնի եւ Կարակասի միջեւ հարաբերություններն ավելի սրվեցին, երբ ամերիկյան զորքերը գրոհեցին եւ գրավեցին վենեսուելական նավթատարը այդ երկրի ափերի մոտ: Այս միջադեպից հետո վենեսուելական նավթի գնորդները, այդ թվում՝ չինական վերամշակման գործարանները, սկսեցին պահանջել ավելի բարձր զեղչեր եւ պայմանագրային փոփոխություններ Վենեսուելայի պետական նավթագազային ընկերություն PDVSA-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՆԱ

Հունգարիան հանել է իր վետոն Եվրոպական խաղաղության հիմնադրամի շրջանակներում Հայաստանին 20 միլիոն եվրո հատկացնելու որոշման վրայից:

Այս մասին X-ի իր միկրոբլոգում նշել է «Ազատություն» ռադիոկայանի եվրոպական խմբագիր Ռիկարդ Յոզվիակը՝ հղում անելով իր աղբյուրներին:

«Այս շաբաթ Հունգարիան վերջապես հանեց իր վետոն մարտ ամսին առաջարկված 20 միլիոն եվրոյի ռազմական օգնության փաթեթի (Եվրոպական խաղաղության հիմնադրամ) վրայից, որը նախատեսված է Հայաստանի համար»,-նշել է նա:

Յոզվիակը մանրամասնել է, որ որոշումը կվերջնականացվի 2026 թվականի հունվարին:

Նշենք, որ նախօրեին Հայաստանի արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Անի Բադալյանը հայտնել էր, որ Եվրոպական միության անդամ բոլոր երկրների կողմից կա քաղաքական համաձայնություն Խաղաղության եվրոպական հիմնադրամի միջոցներից Հայաստանին աջակցություն տրամադրելու վերաբերյալ:

Հայաստանը 2024 թվականի հուլիսին Խաղաղության եվրոպական հիմնադրամից մեկ անգամ 10 միլիոն եվրո էր ստացել՝ դաշտային մոդուլային ճամբար ստեղծելու համար, որը ներառում էր նաեւ մեկ բժշկական օգնության ամբուլատորիա, ինչպես նաեւ համապատասխան ծառայություններ ու կարողություններ:

2025 թվականի մարտին հայտնի էր դարձել, որ Հայաստանը Խաղաղության եվրոպական հիմնադրամից աջակցություն ստանալու երկրորդ հայտն է ներկայացրել: Ավելի ուշ հայտնի էր դարձել, որ Եվրամիության ԱԳ նախարարների խորհրդի նիստի ժամանակ Հունգարիան արգելափակել է Հայաստանին Խաղաղության եվրոպական հիմնադրամից 20 միլիոն եվրո տրամադրելու որոշումը, իսկ ավելի ուշ Հունգարիայի արտաքին գործերի նախարար Պետեր Սիյարտոն հաստատել էր, որ Հունգարիան արգելափակել է այդ որոշումը, սակայն շեշտել էր, թե Հունգարիան դեմ չէ, որպեսզի Հայաստանն աջակցություն ստանա Խաղաղության եվրոպական հիմնադրամից, բայց նույնչափ աջակցություն էլ, ըստ Սիյարտոյի, պետք է ստանա Ադրբեջանը: Սիյարտոն շեշտել էր, որ Եվրամիությունը պետք է հաշվի առնի իրավիճակի անկայունությունը, ինչպես նաեւ այն, որ Հայաստանն ու Ադրբեջանը մոտեցել են խաղաղության համաձայնագրի ստորագրմանը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՁԵՎԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԿՏԻՎ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻ ՌԵՍՈՒՐՍ

Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը պաշտոնապես հայտարարում է Հայկական մշակութային ժառանգության ինստիտուտի մեկնարկի մասին, ինչը կարեւոր քայլ է հայկական ժառանգության փաստագրման, պահպանման եւ ստեղծագործական ակտիվացման համար:

Ինստիտուտը հիմնադրել է Թումոյի գլխավոր տնօրեն Մարի Լու Փափազյանը՝ այն ձեւավորվելով 2020 թվականին Թումոյի՝ Հայկական ժառանգության սկանավորման ծրագրից:

Ինստիտուտի նպատակն է հայկական ժառանգությունը վերածել ակտիվ եւ հասանելի ռեսուրսի ոչ միայն անցյալը պահպանելու, այլեւ մշակութային նոր արտահայտչաձեւեր խրախուսելու համար: Ինստիտուտը ղեկավարելու է Հյուլէ Քէշիշեանը:

Կարեւոր ձեռքբերում է նաեւ նորաբաց Ինստիտուտի բաց հարթակը՝ armenianculturalheritageinstitute.org-ը:

Հարթակը բաց է լայն հանրության առջեւ: Այստեղ հնարավոր է լիովին հասանելի եռաչափ մոդելների միջոցով ուսումնասիրել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ժառանգությունը, բացահայտել դրանց պատմությունները եւ մանրամասնորեն զննել յուրաքանչյուր դետալ՝ հետազոտության, կրթության եւ ստեղծագործական ոգեշնչման համար:

Ժառանգության թվայնացմանն ուղղված աշխատանքներին զուգահեռ ինստիտուտը ձեւավորում է ժառանգության վերաբերյալ նախաձեռնությունների ընդգրկուն էկոհամակարգ. հավաքագրում է հուշարձանների եւ համայնքների հետ կապված բանավոր պատմությունները, գրանցում է ավանդույթները եւ պահպանում ձայնային եւ երաժշտական ժառանգությունը՝ միաժամանակ պատրաստելով ժառանգության հետ աշխատող հաջորդ սերնդին:

Ինստիտուտի առաքելությունն է ապահովել մշակութային հիշողության կենսունակությունը, արդիականությունը



Vank
GANDZASAR MONASTERY

Kosh
SAINT STEPHEN CHURCH OF KOSH

Dashtadem
DASHTADEM FORTRESS



Khachik
QARKOP MONASTERY

եւ հասանելիությունը արտահայտման նոր ձեւերի համար:

Հայկական մշակութային ժառանգության ինստիտուտը նպատակ ունի վերամտածելու՝ ինչպես է ժառանգությունը պահպանվում եւ նոր շունչ ստանում եւ ապահովելու, որպեսզի ժառանգությունը հանդիսանա համընդհանուր ռեսուրս, մշակութային իրավունք եւ նոր ստեղծարարության հիմք:

Այս նախաձեռնությունն անչափ կարեւոր քայլ է հայկական մշակույթի ապագայի համար: Այն ոչ միայն կապահովի մեր պատմության պահպանությունը, այլեւ համաշխարհային մշակութային հարստության մեջ կհամախմբի հայկական ինքնությունը: Արժե արձանագրել, որ այսպիսի ծրագրերը միայն հետազոտության ու պահպանման մակարդակում չեն ավարտվում, դրանք, սկսելով անցյալի տարրերից, իրենց հերթին հաղորդակցվում են ապագայի հետ:

Հուսանք, որ Հայկական մշակութային ժառանգության ինստիտուտը կդառնա մշակութային նորարարությունների սերմ, իսկ դրա գործիքներն ու ռեսուրսները՝ հանրության լայն շրջանակների համար մշակութային ոգեշնչման աղբյուր:

Սա լավ հնարավորություն է հատկապես երիտասարդների համար, ովքեր կարող են այս հարթակով համաշխարհային դիտանկյունից նոր հնարավորություններ բացահայտել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

Կատարի մայրաքաղաք Դոհայում կայացավ ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի՝ ՖԻՖԱ-ի «The Best» մրցանակաբաշխությունը:

ՖԻՖԱ-ի տարվա լավագույն դարպասապահի մրցանակները ստացան Իտալիայի ֆուտբոլի ազգային թիմից Ջանլուիջի Դոննարումման ու Անգլիայի կանանց ընտրանու դարպասապահ Հանա Համպտոնը:

Կանանց ֆուտբոլում լավագույն գոլի՝ Մարթայի անվան մրցանակին արժանացավ Լիզբետ Օվալեն:

2025 թվականի ՖԻՖԱ-ի Պուշկաշի անվան տարվա լավագույն գոլի մրցանակին արժանացավ Սանտիագո Մոնտիելը:

Կանանց ֆուտբոլում լավագույն մարզչի կոչմանն արժանացավ Անգլիայի հավաքականի մարզիչ Սարինա Վիգմանը, իսկ տղամարդկանցը՝ ՊՍԺ-ի իսպանացի մասնագետ Լուիս Էնրիկեն:

Կանանց «The Best» մրցանակին արժանացավ Իսպանիայի ֆուտբոլի ազգային թիմի ու «Բարսելոնա»-ի ֆուտբոլիստ Այտանա Բոնմատին:

Տղամարդկանց պայքարում լավագույնի կոչմանն արժանացավ Ֆրանսիայի ազգային հավաքականից ու ՊՍԺ-ից Ուսման Դեմբելեն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Հասմիկ Ավագյանը Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում հանդիպել է Հայաստանի ծանրամարտի տղամարդկանց ազգային հավաքականի անդամներին:

Այս մասին հայտնում են ԿԳՄՍՆ-ից:

Հավաքականը գլխավոր մարզիչ Հակոբ Փիլոսյանի ղեկավարությամբ անցկացնում է տարվա վերջին ուսումնամարզական հավաքը՝ եզրափակելով տարին եւ նախապատրաստվելով առաջիկա մրցաշրջանին:

Հանդիպման ընթացքում Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Սամվել Գասպարյանը նախարարի տեղակալին ներկայացրել է հավաքականում տեղի ունեցած մարզչական վերջին փոփոխությունները, ինչպես նաեւ առաջիկա ծրագրերն ու անելիքները:

Հայաստանի ծանրամարտի տղամարդկանց հավաքականը ներկայում նախապատրաստվում է փետրվարին կայանալիք Հայաստանի առաջնությանը: Այդ նպատակով նախատեսվում է եւս մեկ ուսումնամարզական հավաք անցկացնել հունվարին՝ մրցումներին առավել արդյունավետ պատրաստվելու համար:

Ուսումնամարզական հավաքին մասնակցում են նաեւ Հայաստանի երիտասարդական հավաքականի անդամները, որոնք վերջերս հաջող հանդես են եկել Ալբանիայի Դուրրես քաղաքում կայացած ծանրամարտի Եվրոպայի երիտասարդների եւ մինչեւ 23 տարեկանների առաջնություններում եւ վերադարձել մեդալներով եւ բարձր արդյունքներով:

Ծանրորդների հետ հանդիպման ընթացքում քննարկվել են մարզումային պայմաններին, ճմեռային հանդերձանքին, մարզագույքին վերաբերող հարցեր:

ԱՐՎԵՍՏ ԵՎ ԺԱՄԱՆՑ

ԱՆԳԼԵՐԵՆ Է ԹԱՐԳՄԱՆՎԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ «ՄԻՐՀԱՎ»-Ը

Հասմիկ Հովակիմյանն անգլերեն է թարգմանել Ակսել Բակունցի «Միրհավ» պատմվածքը՝ նպատակ ունենալով Բակունցի խոսքի նրբությունն ու զգայական հարուստ աշխարհը հասանելի դարձնել նաեւ օտարալեզու ընթերցողին:

«Միրհավ»-ը Բակունցի լիրիկական պատմվածքներից է, որում բնությունը դառնում է մարդու ներաշխարհի հայելին:

Պատմվածքի կենտրոնում են գյուղական պարզ մարդիկ՝ իրենց լռությամբ, սպասումով ու չասված զգացմունքներով:

Միրհավ թռչունը հանդես է գալիս որպես խորհրդանիշ՝ հիշողության, կորստի եւ անցնող ժամանակի: Կերպարներն ապրում են բնության հետ ներդաշնակ, իսկ նրանց ապրումները փոխանցվում են մեղմ, բայց խոր հուզական լեզվով:

Գիրքը կարելի է ձեռք բերել տարբեր գրախանութներից:

ՀԱՃԵԼԻ ԱՆԱԿՆԿԱԼ՝ ՓՈՔՐԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանն Ամանորի տոներին՝ դեկտեմբերի 19-ից հունվարի 4-ը, փոքրիկ այցելուներին եւ նրանց ծնողներին հրավիրում է «Լույսի ծածկագիրը» ինտերակտիվ տիկնիկային ներկայացմանը:

Ներկայացումը ստեղծվել է վարպետի մանկական ստեղծագործությունների հիման վրա եւ միավորում է գիտությունը, կրթությունը, սերը, իմաստությունն ու ճշմարտությունը:

Միջոցառումն իրականացվում է Ավետիք Իսահակյանի 150-ամյակի հոբելյանական ծրագրի շրջանակում:

Ներկայացումը հանդիսատեսին կտեղափոխի Իսահակյանի հեքիաթային աշխարհ՝ ստեղծելով տոնական, ջերմ եւ կախարդական մթնոլորտ: Փոքրիկներն ու մեծերը միասին կպարզեն՝ որն է «Ամենապիտանի բանը», կփորձեն հասնել «Արեւի մոտ» եւ կհանդիպեն «Նուկիմ քաղաքի խելոքներին»:

Ինտերակտիվ ձեւաչափը երեխաներին հնարավորություն կտա դառնալու ներկայացման անմիջական մասնակից:

Ներկայացումների ժամանակացույցը

Դեկտեմբերի 19՝ ժամը 16:00
Դեկտեմբերի 20-21՝ 14:00
Դեկտեմբերի 26՝ 16:00
Դեկտեմբերի 27-28՝ 14:00
Դեկտեմբերի 29-30՝ 16:00
Հունվարի 3-4՝ 14:00
Տարիքային խումբը՝ սկսած 3 տարեկանից:

Ներկայացման սցենարիստն եւ ռեժիսորը Քրիստինե Ասրյանն է, դերասանուհի, վարող՝ Ալլա Սահակյան, բեմանկարիչ՝ Սուսաննա Հախվերդյան, տիկնիկագործ՝ Նանե Ջորաբյան, երաժշտությունը՝ Էլլադա Սայադյանի:

● *Դեկտեմբերի 21-ին՝ 14:00-ին, թատրոն «Կայարան»-ում տեղի կունենա «Ամանորը Հոգվարթսի ճեպընթացում» շոու-ճանապարհորդությունը՝ իրական շարժվող գնացքով: Տոմսերի արժեքը՝ 13,000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. ՀՀ քաղաքացին օտարերկրյա դիվանագիտական ծառայություն իրականացնելուց հետո վերադառնում է ՀՀ: Հնարավո՞ր է ներմուծել անձնական օգտագործման գույքը առանց մաքսատուրքի:

Հարություն Գալստյան (53 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 24-րդ մասի համաձայն՝ օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետները եւ ՀՀ դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առեւտրական եւ այլ կցորդները ծառայության ավարտից հետո, առանց մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) վճարման, կարող են ներմուծել իրենց անձնական օգտագործման գույքը՝ բացառությամբ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 21 եւ 8704 31 ապրանքային դիրքերում դասակարգվող մարդատար ավտոմեքենաների եւ շարժիչով այլ տրանսպորտային միջոցների: Սույն մասով սահմանված գույքի բնաիրային չափերը սահմանում է ՀՀ կառավարությունը:

ՀՀ 2000 թվականի հուլիսի 6-ի Մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 6.1-ին մասը շարունակում է գործել օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետների եւ ՀՀ դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առեւտրական եւ այլ կցորդներին վերաբերող մասով մինչեւ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 21 եւ 8704 31 ապրանքային դիրքերում դասակարգվող մարդատար ավտոմեքենաների եւ շարժիչով այլ տրանսպորտային միջոցների համար Միության միասնական մաքսային սակագնով սահմանված դրույքաչափերի՝ պայմանագրի համաձայն՝ ՀՀ կողմից կիրառությունը սկսվելու ժամկետը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ֆիզիկական անձանց կողմից ՀՀ սահմանով տեղափոխվող, ՀՀ-ում հաշվառված թեթեւ մարդատար տրանսպորտային միջոցները ազատվում են մաքսավճարից:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է իրենից ներկայացնում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ դատական որոշման բողոքարկումը:

Սրբուհի Դավթյան (54 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաեւ կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ բողոքները դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի կողմից բերվում են Վերաքննիչ դատարան անմիջականորեն կամ որոշում կայացրած դատարանի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով:

Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը, դատարան հասցեագրված բողոքներ ստանալով, պարտավոր է գրանցել դրանք եւ ուղարկել ըստ ընդդատության՝ այդ մասին տեղյակ պահելով հսկող դատախազին:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վերաքննիչ դատարանը, ստանալով բողոքը, անհապաղ պահանջում է կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը եւ դատարանի որոշումը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Շամշյան.քոմ-ի

Դեկտեմբերի 17-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 17:10-ի սահմաններում 911 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Ռաֆֆու փողոցում՝ եկեղեցու հարեւանությամբ, ավտոմեքենա է այրվում:

Մինչ հրշեջների ժամանումը «Opel» մակնիշի ավտոմեքենայում առաջացած կրակի դեմ պայքարել են քաղաքացիները, վարորդը, պարեկային ծառայության հրամանատարը եւ պարեկները, ապա ժամանած հրշեջները մարել են այն:

Բարեբախտաբար տուժածներ չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 9 - 14 - 1 + 3
Կոտայքի լեռներ	- 8 - 12 0 + 2
Կոտայքի նախալեռներ	- 4 - 7 + 4 + 6
Գեղարքունիք	- 8 - 13 - 1 + 3
Լոռի	- 6 - 11 + 3 + 6
Տավուշ	- 3 - 6 + 5 + 8
Արագածոտնի լեռներ	- 9 - 14 - 1 + 2
Արագածոտնի նախալեռներ	- 3 - 7 + 3 + 7

Արարատ	- 4 - 8 + 4 + 7
Արմավիր	- 5 - 8 + 5 + 8
Վայոց ձորի լեռներ	- 5 - 9 + 2 + 5
Վայոց ձորի նախալեռներ	- 4 - 7 + 4 + 8
Սյունիքի նախալեռներ	- 6 - 11 + 1 + 4
Սյունիքի հովիտներ	0 - 4 + 5 + 9
ԼՂՀ	0 - 3 + 5 + 8
Երեւան	- 1 0 + 2 + 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.12.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*